

# Հայտարարություն News.am-ի մարզական թղթակից Վերա Մարտիրոսյանին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից հավատարմագրումը մերժելու կապակցությամբ

Հունիսի 6, 2017

News.am-ի մարզական բաժնի թղթակից Վերա Մարտիրոսյանին մերժել են ֆուտբոլի Հայաստանի հավաքականի 2017թ. հունիսի 4-ի և 10-ի խաղերի լուսաբանման հավատարմագրումը:

Ի պատասխան հավատարմագրումը մերժելու պատճառի մասին լրագրողի հարցման՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայության ղեկավար Հայկ Կարապետյանը հայտնել է, որ դա արվել է ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի անձնական կարգադրությամբ: Կարելի է ենթադրել, որ Ֆեդերացիայի նախագահին դուր չի գալիս, թե Վերա Մարտիրոսյանն ինչպես է գրում հայկական ֆուտբոլի մասին:

Մինչդեռ Վերա Մարտիրոսյանն արդեն երկար տարիներ աշխատում է մարզական լրագրության ոլորտում, և նրա հրապարակումներն աչքի են ընկնում լուսաբանվող թեմայի հանդեպ ստեղծագործական և պրոֆեսիոնալ մոտեցմամբ: Այսպես, 2015թ. Վերա Մարտիրոսյանն արժանացել է Երևանի մամուլի ակումբի ամենամյա մրցանակին՝ «մարզաշխարհի հանդեպ թարմ հայացքի և բազմակողմանի մոտեցման համար»: Այլ կերպ ասած, մերժելով նրան հավատարմագրել՝ ՀՖՖ-ն News.am-ի բազմահազարանոց լսարանին զրկել է ազգային հավաքականի խաղերի վառ և ինքնատիպ լուսաբանումից:

Ելնելով այն բանից, որ սա նմանօրինակ առաջին դեպքը չէ, մենք՝ ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ անձնական վերաբերմունքի հիման վրա հավատարմագրման մերժումն անթույլատրելի է:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունից պահանջում ենք հետագայում բացառել լրագրողի գործունեության նման սահմանափակումները:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ  
ԽՈՍՔԻ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ  
ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ  
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ  
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ